

Հալվոր մարդ մե կէրթա մըտ թագավոր գանգատ:

— Թա՛գավոր,— կըսե,— քու մարդիկ օր կը մտնան մըջ ժողովրդին՝ ահ ու զար կը բոնե մըզի, շորս դեն ծեծ ու ջարդ, ալան-թալան, սպանութեն է, ըզի աստված կը վերցո՞ւ:

— Ըպա ի՞մալ գուզիս, օր էղնին:

— Գուզիմ,— կըսե մարդ,— մարդավարի էղնին, գութ ու խիղճ ունենան, չէ՛ թե գել-գազան կտրին վըր խեղճերուն, ընդոք լե բըզի քֆրին ու անիծին:

— Ընձի՞:

— Հըմա՛ քըզի, ըպա վի՞ն: Յորին դու աստված իս, օր չը բըֆրին ու անիծին:

Թագավոր զգլուխ կը կախե, խել մե կը մտածե, կը վերու, կըսե.

— Ա՛ղեկ, դու գնա, բան մե կէնինք:

— Կէնիս՝ շուտ էրե: Պտի հասկընաս օր օղորդ է՝ դու գլուխն իս, ժողովուրդն՝ յոտներ. յոտներ օր թուլցան՝ գլուխ հե՛շ բանիմ՝ պետք չէ. ընդոք կը պահին ու կը տանին զգլուխ: Կռիվ մ՝ օր էղնի՛ գու վի՞ն ձեռք գերկընցուս, էլման ժողովրդին: Ծճգոհ ժողովրդով կոնա՛ս գդուշման շոբըցու:

— Զէ՛, վուա, չըմ կոնա:

— Դե՛, ես բան մ՛ըսի, մկա դու գինաս,— կըսե հալվոր, թոր-կե գիկա:

Կըսին, ու ըզի օղորդ է, էդ թագավոր մատ-մատին չը զարկեց, ի՞մալ զարկեր, օր ուր խայիմութեն ժողովրդին ահ ու զարի մեջ պահեն էր:

